

Ամբաս Բիւրաս
Խմբագրութիւն «Փիիհնիկ»,
Աղեփսանդրիա



S. Burat
Rédaction «PUNIG»
Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

Ղր. 45
ՏԱՐԵԿԱՆ... 45
ՎԵՑՍՄՍԵՍՑ 25

ԲԱԺՆԵԳԻՆԸ
ԿԱՆԽԻԿ Է



ՓԻԻԿՆԻԿ

ԱՐՏԱՍԱԶՄԱՆ

Ֆր. 8
ՏԱՐԵԿԱՆ... 15
ՎԵՑՍՄՍԵՍՑ 8

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Բայլ. 6



ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Բ. ՏԱՐԻ

ՇԱՐԱԹ 30 ՆՈՅԵՄԲԵՐ 1901

ԹԻԻ 29

ՀԱՐՑԸ

(Շար. ԻԸ. քիւէն եւ վերջ)

Մենք արդէն վաղուց դամբանա-
կանը կարդացինք այդ ակնարուած
Խորհուրդին, որուն վրայ եթէ կա՛յ միս-
թարական բան մը, առժամեայ հան-
գամա՛նքն է անոր: Իսկ Վսեմ. Պօղոս
Բաւա Նուպարի յայտարարութիւնը, ո-
րուն ստուգութեան պատճառով ստանձնած
է բնականաբար Արշալոյսի բանիբուն
թղթակիցը — անակնկալ մը չը կրնար
նկատուիլ գէթ անոնց համար, որոնք
Նորին Վսեմութեան գրաւոր յայտարա-
րութեան օտար չ'էին կրնար մնալ, եւ ո-
րոնք արտի անպատշաճ գոհունակու-
թեամբ մը կը սիրեն այժմէն ընդնը-
մարել արեւոյսը, որ մօտ է ծագելու,
աւետելով ամեն օրինաւէր ու ազգա-
յին պատիւին նախանձախնդիր ազգա-
կիցներու՝ գեղեցիկ թուականի մը բա-
ցումը, որուն առաջին պատիւը պիտի
վիճակի Վսեմ. Պօղոս Բաւա Նուպար-

րին, որ իրաւամբ տրացած գիտունի
համբաւին հետ պիտի միացնէր նաեւ
խղճամիտ վարչագէտի մ'առաքինու-
թիւնը:

Նորին Վսեմութիւնը, խորապէս
ուսումնասիրելով տեղական ազգային
գործերուն իրականութիւնը, յանգած
է անսարակոյս այն հզօր համոզման
թէ՛ վերջ մը դնել պէտք է արդի ձեւին
անմիջական հետեւանքն եղող ողբալի
կացութեան, որ սպառնալից փուլի մը
մէջ մտած է արդէն. կացութիւն մը,
որ դժբաղդաբար ստեղծուած, աւելի՛
եւ աւելի վաստակաւոր Սրբ. Առաջ-
նորդին օրով, որուն համբան սպասե-
ցինք երկա՛ր ատեն...:

Գեր. Այվազեանէն չէ՛ որ պէտք է
սպասել ուրեմն իրերու արդի կացու-
թեան բարեփոխման. անի՛ խաղաղու-
թեան ու երանաւէտ անգործութեան
առաքեալն է. — «il dolce far niente» —
անի պերճախօս է, քարոզի՛չ է:

Հետեւաբար, ժողովուրդին ակըն-
կալիքները կը կատարեն դարձեալ Վսեմ.
Պօղոս Բաւային, հասարակաց յարգան-

քին առարկայ եղող կարող անձնաւորութեանը, որ լուծելով այս Առժ. Թաղ. Խորհուրդը, կատարած պիտի ըլլայ արդարութիւն մը. զի չէ կարելի որ դեռ պատճառի վրայ մնայ Խորհուրդ մը որ, — քանի՛ քանի քննադատելի արարքները մէկտէր թողունք, օրինակի համար, Սեպտ. 1ի գայթակղութիւնը —, թէ՛ իր կազմութեամբն եւ թէ՛ ոգիւնովը հակասահմանադրական է:

Այո՛, պէտք է լուծուի, ու անյապա՛ղ լուծուի այն, նոր ընտրութիւններ պէտք է ըլլան, նշանակալից սահմանադրական ու օրինաբար Թաղ. Խորհրդով մ'օժտելու համար տեղիս հայ հասարակութիւնը, որ ա՛յնքան սուտեց իրենու արդի վիճակէն:

Այս արդարութիւնը գործադրելով, Նորին Վսեմութիւնն անսացած պիտի ըլլայ իր լայնամիտ ու ազատական ըմբռնումներուն ու անմոլոր խղճմանքէն, որուն բեռը չէ կարելի որ թեթեւայ այլապէս, եթէ ոչ — ինչ որ բոլոր ուշիմ ազգայնոց փափագն է — մէջտեղէն վերցնելով չափազանցօրէն երկար տեւող անախորժ Եարցը, նոր ընտրութեանց ձեռնարկութեամբ ու Ազգ. Օրէնքին սիրապետութեամբը:

Այնուհետեւ դիւրին է նշել սահմանը համարաւոր եւ համարասու մարմիններուն փոխադարձ պարտոց ու իրաւանց. անհրաժեշտ՝ վերահաստատելն է խախտուած հաստատութիւնը, որ պիտի գիտնայ գնահատել Վսեմ. Աստեմապետին գործը:

ԻԶՄԻՐԻ ԱԶԳ. ՀԻՒԱՆՈՒԱՆՈՅԸ

Իզմիր 25 Հոկտեմբեր 1901

S.

Իզմիրի Ազգ. Հիւանդանոցը, որ վերջացող տարւոյն հետ կը բոլորէ հարիւրամեայ շրջան մը, իր գարաւոր գոյութեան ընձեռած բազմադիմի բա-

րիքներով՝ կ'արժէր որ ունենար իր Յորեւեանի հանդէսը, իբր երախտագիտութեան համազգային ցոյց մը, և որպէս յայտարար նշան այն խանդակաթ սիրոյն և համակրանաց, որով շրջապատուեցաւ այն յընթացս իր հարիւրամեայ գոյութեան, և որու մէջ միայն կարելի է փ'տուել իր հաստատութեան և տեւականութեան խորհրդաւոր գաղտնիքը: Ազգին տունը՝ յաւերժական կենդանի կոթող մ'է, կանգնուած յանուն զթութեան և մարգասիրութեան, որու փառքն ու պարծանքը որքան իզմիրցւոց, ո՛չ նուազ իրաւամբ կը պատկանի նաև ընդհանուր Հայութեան, որու մասնաւոր հոգածութեան և փափուկ խնամոց առարկան ըլլալէ երբէք չէ՛ գաղբած: — Եւ եթէ ի նկատի առնունք սա պարագան թէ բարեգործական այդ շէնքն, ի սկզբանէ իւր հաստատութեան, իր յարկերն միշտ տրամադրելի և 'ատչելի պահած է ոչ միայն հայ, այլ և օտարազգի հիւանդներու և ախտաժէտներու հանդէպ՝ առանց ազգի և կրօնի խտրութեան, այն առեն իր նշանակութեան մէջ աւելի կը բարձրանայ, և իր հանրային հանգամանքով՝ անվիճելի իրաւունք մը կ'ստանայ նաև ընդհանուր մարդկութեան երախտագիտական զգացումներուն վրայ: Անոր պատմութիւնը, որ տեղեկագրի ձևով հրատարակութեան տրուած է ի գիտութիւն հասարակութեան, խօսուն յիշատակարան մ'է, որ բարձրաբարաւ կը հռչակէ անոր ընձեռած անհաշուելի օգուտները:

Ահա այս նկատումներով, Հիւանդանոցի Պատ. Հոգաբարձութեան առաջարկութեան և Ազգ. Վարչութեան որոշման վրայ՝ ձեռնարկուած է կատարել Հիւանդանոցիս հարիւրամեայ Յորեւեանի հանդէսը, որ տեղի պիտի ունենայ յառաջիկայ 1902 Մարտ 31ին Ս. Լուսաւորչի տօնին յաջորդող կերակի

օրն, մասնակցութեամբ հայ և օտար մամլոյ ներկայացուցիչներու և նմանօրինակ հաստատութեանց վարիչ մարմիններու:

Գլխաւոր կէտը, զոր ամեն ճշմարիտ Հայու նկատաւութեան կը յանձնենք, սա՛ է թէ Իզմիր, հազրդակցութեանց բերմամբ, վերջին տարիներու մէջ մանաւանդ՝ բնակութեան երկրորդ կեդրոն մը եղած է ազբատիկ պանդուխտ Հայերու համար, որոնք գունդագունդ քաղաքս կը դիմեն ապրուստի միջոցներ ճարելու նպատակով, և որոնցմէ շատերը խաներու և նկուղներու ախոարոյր մթնոլորտին մէջ տկարացած՝ Հիւանդանոց կը փոխադրուին բոյժ և դարման գտնելու համար: Դիւրին է երեւակայել թէ այսպիսի անխուսափելի հարկի մը մ'առջև ո՛րքան կը տազնապի Հիւանդանոցի արդէն իսկ անձուկ պիտօճէն, և թէ ո՛ր աստիճան կը դժուարանայ այն՝ խզմըտօրէն կատարելու իր վրայ դրուած պարտականութիւնը: Հետեւաբար պատասխանատուութեան ընդարձակ բաժին մը կը ծանրանայ մօտիկ և հեռաբնակ ամեն ազդայնոց վրայ՝ Յորելեանի սոյն գեղեցիկ առիթով ևս նիւթապէս սատար կանգնիլ այդ Հաստատութեան՝ անվթար և անխախտ պահելու համար անոր հանրօգուտ և պատուաբեր գոյութիւնը:

Իրամական նուէրք, նուիրատուութիւնք, նամակ, հեռագիր և այլն պէտք է ուղղել Յանձնաժողովոյս անդամներէն և Ազգ. Հիւանդանոցի Հոգաբարձութեան Ատենապետ՝ Մեծ. Նշան էֆ. Յ. Հարենցի՝ հետեւեալ հասցեով՝

Մեծ. Նշան էժէնտի Յ. Հարենց
Ազգ. Հիւանդանոց — ԻՉՄԻՐ

Mr. Nichan H. Harentz

Hôpital Arménien — SMYRNE

Տաշակոյս չունինք թէ Յորելեանի սոյն հանդէսն ամենուրեք սրտագին

ընդունելութեան արժանանալով, արդեամբ պիտի քաջալերուի ամեն դասակարգի բարեսէր անձանց նուիրատուութեամբ, նկատելով որ մեր Սօցտատափառ Վեհապետ ՍՈՒԼԹԱՆ ԱՊՏԻԻԼ — ՀԱՄԻԴ Բ. ԿԱՅՍԵՐ բարեհաճ կամքն ու ջերմագին փափաքն է ո՛չ միայն երկրին մէջ բազմացնել բարեգործական հաստատութիւններն, այլ և իւր բարձր պաշտպանութեամբ և հովանաւորութեամբ կենդանի և վառ պահել իւր հպատակաց բոլորն մէջ գթասիրութեան և բարեգործութեան հոգին: (1)


ԱՆԳՈՄԻ ԶՄԻՌՆԵՐՈՅ Ս. ԼՈՒՍԱ-
ԻՈՐՁԵԱՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՅԻ

ՀԱՐԻՐԱՄԵԿԻ ՅԱՆՅԱՌՈՂՈՎՈՅ
Նախագահ՝ Մելք. Արփա. Մուրատեանց

- Մասթէոս Պալեօգեան
- Սեփեան Սպարալը
- Կարապետ Արապեան
- Ղուկաս Եսայեան
- Գարեգին Յ. Բարազեան
- Զարեհ Թագրազեան
- Պօղոս Պերկամալեան
- Յակոբեան Պալքինեան
- Լեւոն Մկրտիչ
- Աւետիս Աւետիսեան
- Աւետիս Լալաեանց
- Նեան Յ. Հարենց



Ք Ր Ո Ն Ի Կ



— ՅՐԱՆԱԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ԲՈՒԷ-
արկութեամբ ընդունեց չինական փոխառութիւնը, 265 միլիոն ժրանգի

(1) Խեղճ Իզմիրցիներ, որսն, այսպիսի պարագաներու մէջ ստիպուած են այս շողոմօրք լեզուն գործածելու Հայոց Դահնապետին հանդէպ:

գումար մը, զոր կառավարութիւնը պահանջած էր:

— ԱԹԷՆՔԻ վերջին խոսվութեանց — որոնց շարժառիթն էր Աւեսարանին քարգմանութիւնն արդի յունարէնով — հետեւաններէն մին եղաւ Դահլիճին անկումը: Նոր դահլիճը կազմուեցաւ հետեւեալ կերպով.

Տ. ԶԱՅՄԻՍ, նախարարապետ ու Արսաբին գործերու նախարար.

Տ. ՓՈՎԿԻՈՆ ՆԵԿՐԻ, Ելմսական նախարար.

Տ. ՔՕՐՓԱՍ ԳՆԴԱՊԵՏ պատերազմական ու առժամապէս ծովային նախարար.

Տ. ԹՐԻԱՆՏԱՅԻԼԱՔՈՍ, ներքին գործերու նախարար.

Տ. ՄՕՆՅԷՌԱԹՕ, կրթական ու կրօնային գործերու նախարար.

Տ. ԹՕՓԱԼԻՍ, Արդարութեան նախարար.

Տ. ՎԱՍՍՍ հրամանատարը սեղը կ'անցնի Սթայֆու գնդապետին, իբրեւ պետ Արեմի պահականոցին. իսկ Տ. Սօճիանու, հրետազօրաց գնդապետ, կը յաջորդէ Տ. Վոչձօջի, իբրեւ ոստիկանապետ:

Այս նոր դահլիճը կազմողները մեծ մասամբ երեսփոխաններ են ու նախկին նախարարներ, որոնք հայրենասիրութեան ու ձեռնհասութեան ապացոյցներ տուած են, բայց Տեարց Թէոսֆիսի ու Սրմօ բուլօյի շահած մեծամասնութիւնը չ'ունին իրենց տրամադրութեան սակ:

— ՆՈՅ. 24ի ԿԱԽԱՂԱՆԸ. Ապս-իւ-Ազիզ Մուսի հոշակաւոր մարդասպանը կախաղան հանելու օրը, կիրակի, 10000 է աւելի ամբոխ մը խոնուած էր: Վերջին տեղեկութեանց համեմատ, կառավարողը սանդ բանտ կառֆին մէջէն Մուսի՝ բանտապանին հարցուցած է եղեր իր դահլիճը: Յետոյ, երբ քարտուղարը կը կարգար մահավճիռը «Ս/ռչէ յունան Զէյսան յիւնապետը սպան-

նած ըլլալուն» համար, Մուսի խիստ հաստատական «այո» մ'է աւելցուցեր:

Դասապարտեալը խնդրած է յետոյ որ իր մարմինը չենքարկուի դիպակնութեան, ինչպէս որ սովոր է: Յետոյ ինք իրեն ու զարմանալի կորովով մը կախաղանի սանդուխին աստիճաններէն վեր ելաւ: Իսկ երբ Տամաննուրէ գինք բերող շոգեկառէն վար կ'իջնէր, աչքը սեւեռելով էպ ի կապուտակը, Մուսի ըսեր է. «Ահա՛ լուսինը Շապան ամսուն 12դ օրն է, ու այս գիշերուան մէջ սպաննեցի յիւնապետը...:»

Զը մտնանք ըսելու թէ կախաղան հանուած այս Մուսին դեռ 20 տարուան էր:

— ՊԷՐՊԷՐԵՍՆ ՎԱԺԱՐԱՆԻՆ կիսայորբելեան հանդէպ խիստ փայլուն անցած է Իսկիւսարի համանուն վարժարանին մէջ: Այս շաբթուան Պոլսական թերթերն ընդհանրապէս այդ հանդէսին մանրամասնութիւնները կը բերեն՝ բոլոր սխմակները գրաւուած են ոտնաւորներով, գրաբար թէ աշխարհաբար ուղերձներով ու նաւերով, որոնք այդ առթիւ արտասանուած են:

Այս երրորդ անգամն է որ մեր ազգը կուտայ իր պանծալի գաւակները փառաւորելու ու անոնց գործերն անմահացնելու գեղեցիկ ապացոյցը:


Նախ, Մամուրեանի գրական գործունէութեան յարելեանը, յետոյ Մխիթարեան հիմնարկութեան երկերիւրամեակը, եւ հիմա, Պերպլեան վարժարանին հիմնարկութեան քաւորհինգամեակը. այս երեք առիթներուն մէջ ալ, բովանդակ ազգը, հեռի անտարբեր մընալէ, փութաց իր գնահատումի ու երախտագիտութեան երաշխիքը բերել այդ մեծ Հայերուն:

Պերպլեան կէս-յորբելեանին առթիւ մինչեւ ցարդ ստացուած նուէրները կը կազմեն 1098 օսմ. ոսկիի գումար մը, որուն 100 ոսկին արգոյ յորբելեարը կը նուիրէ ուսուցչաց օգնութեան

սնտուկին, 30 ոսկին վանայ Երամեան վարժարանին իսկ 20 ոսկին Մամուրեանի յիշատակին կանգնելիք արձանին շինութեան:

Յարելեարդ կ'ստանանք նաեւ որդեգրումը ու դաստիարակութիւնը 5 որբերու:

ՏՕՆ ՔԻՇՕ՞Թ ԹԷ ՍԿԱՆԱՐԷԼ



Տ. Տէլգասէ ի հարկէ ամեն օր չէ որ կընդունի Գէ s'Օրսէյի մէջ Տեարց տ'էսթուրնէլի, Տընի Գօշէնի ու Սըմպայի պէս երդեակի մ'այցելութիւնը: Այս միակ ընթացքն ինքնին պերճախօս բան մ'ունի: Գառը խիստ շահեկան դատ մը պէտք է ըլլայ որ միահամուռ գործողութեան մը մէջ միացնէ իրարմէ այնքան հեռացած երեք մարդեր:

Տ. Սմպա ընկերվարական է, Տ. տ'էսթուրնէլ՝ հանրապետական, Տ. Գօշէն՝ պահպանողական, արքայական ու կաթոլիկ: Ներքին քաղաքականութեան գեանին վրայ, լաւ դիտեմ, չ'կայ կէտ մը միայն, որուն վրայ այս երեք երեսփոխանները նոյնը խորհին ու նոյնը խօսին:

Ու կարծիքներու ճիշդ այս դանազանութիւնն է որ ասոնց ներկայ համաձայնութեան արժէքը կը կազմէ: Ու հարստահարուած ժողովուրդ մը պաշտպանելու համար իրենց եռանդն՝ ի պատիւ իրենց է ամբողջովին:

Ընկերվարական մ'անշուշտ իր պարտականութիւնը կը կատարէ լսիկ երբ Հայաստանի դատը ձեռք կ'սունէ. բայց այս ժամուս այնչափ խոտան չէ պարտակ յնութիւն մը կատարելը:

Տ. տ'էսթուրնէլ, որ մեծ գործերու մէջ իր ձեռնհասութեամբ անուն ունի, յաջող մասնագիտութիւն մը չինած է միջազգային քաղաքականութեան, ուր կը պարզէ խելացի ու բա-

նիմաց գործունէութիւն մը, ուսակապեաութեան մը ճշմարիտ շահերուն մեծ ըմբռնում մը և նմանը քիչ տեսնուած աշտոտայնութիւն մը:

Դաւլ Տ. Տընի Գօշէնի, այն խիստ փոքրաթիւ հակառակորդներէն է որոնց կարծիքներուն դէմ կուտելով հանդերձ՝ կը յարգենք միշտ գիտակցութիւնը և որոնց՝ ամենաշերտ կուսակցական մարդեր անդամ արժանաւոր յարգանքը կընծայեն, ցաւելով որ ստիպուած են անոնց դէմ կուտելու:

Երեք հակառակ իմացումներու այս ներկայացուցիչները միաբանեցան նախարարին ուղղելու համար տեսակ մը քաղաքավար ազդագիր: Հիմայ որ Լորանտօ ու Թուպինի պահանջները դանձուելու կէտին վրայ են, հարկ դատեցին ասոնք յիշեցնելու թէ ուրիշ աւելի նուիրական պահանջներ կային:

Ոչ ինչ աւելի վտանգաւոր պիտի ըլլար քան թողուլ օր տաշածուէր այն գերազանցապէս թիւր դաղափարը թէ ամեն բան վերջացաւ, թէ՛ ալ պարտակ հորթը մորթելը մնաց և թէ Սուլթանը կատարեց իր բոլոր յանձնառութիւնները: Արեւելցի խանութպանիկները չեն ու չեն ալ կրնար ըլլալ Արեւելքի մէջ միակ յաճախորդները Ֆրանսային: Այնուհանդիպումը կը պարտաւորէ: Ֆրանսան անցեալ մ'ունի, որ տիրաբար իրեն կը պատուիրէ ըլլալ չեմ ըսեր Տօն Քիշօթը, չ'յշտացնելու համար Տ. Տէլգասէն — այլ պարկեշտ միջնորդը այն մեծ յաճախորդաց որ կը կոչուին Հայաստանը, Մակեդոնիան, բովանդակ օսմ. ժողովուրդը: Ֆրանսան իր առջև ունի ապագայ մը, որ իրեն չը ներքեւ ձեռքերը լուալ քաշուիլ նահատակ ազգերուն ճակատադրէն, աւելի կամ նուազ Ֆրանսայի վաճառականներու՝ աւելի կամ նուազ չիլ պարտքերուն գանձումին մէջ ետականօքէն ամփոփուիլ մնալ:

Նոյն իսկ եթէ կարելի ըլլար պըն-

դեւ թէ՛ յարմար էր նորէն չ'արթնցրնել վէճի նիւթեր, քնացնել խրթին խնդիրներ, նորէն չը գլորել մէջտեղ թո՛ւրքիոյ բարենորոգումներուն Սիսիւփի ժայռը, պիտի կրնայի ընդունիլ, հակառակ խղճիս ու խելքիս բոլորքներուն, եթէ վերսկսող շարքերը՝ իր բոլոր մերկութեամբը խայտառակած չ'ըլլային այս շնականութեան անհեթեթութիւնն ու աւելի երկայն լուսութեան մը մեղսակցութիւնը: Բայց ամեն պարագայի մէջ, ի՛նչ որ դեռ նոր անցաւ, դիւանագիտական յարաբերութեանց խզումը, ծովակալ Գայեարի նաւախումբին առաքումը, Մետլէնի գրաւումը, այս ամենը բացարձակապէս անկարելի կը դարձնէ իսկապէս ժրխտական կամ նոյն իսկ սպասողական դիրքի մը պահպանումը:

Իրա՛ւ, յարաբերութիւնները պիտի վերապնդուին: Մեղրալուտին մը պիտի յաջորդէ դժտումին: Հաշտութեան պայմաններուն մէջ չ'գծուած ամեն բան ոչինչ պիտի համարուի ու չեղեալ:

Փրանսական դեսպանը Բերա վերադարձած, դաշնագրի մ'ուժով ուր պիտի չ'գծուէին տառապաղ ազգութիւններու դանդատները, անշնորհք բան մ'ըրած կ'ըլլար խօսակցութիւն բանալով կամովին դուրս ձգուած նիւթի մը վրայ: Ապտ—Իւլ—Համիզ գէթ առերևոյթ իրաւունք պիտի ունենար պնդելու թէ՛ Փրանսան լուելեայն նուիրագործած է ամեն ինչ որ դիտմամբ չէ՛ յիշած Տ. Պարսի բերանացի ծանուցագիրներուն ու նախա—յուշագիրներուն մէջ, և թէ՛ Փրանսան սպունգով սրբած է առաջուան բոլոր յանցանքները, կանոնաւոր յարաբերութեանց վերսկսելովը:

Աւելին կայ: Միւնիւր պէյ, դիւանագիտութեան կանոնի մը համաձայն, պիտի Բարիզ գայ նորէն: Իսկոյն կը վերջանան երկիրը մաքրելու բոլոր յամոզ միջոցները, որոնք ձեռք առնուած

էին անոր բռնի երթին ատեն: Պիտի տեսնէք նորէն երևելի նորին Բարձրութեան լրտեսներուն: Փրանսան պիտի նորէն թոյլտայ, Սինապեաններուն ու համիտեան սասիկանութեան միւս բարձր ու ցած լրտեսներուն, որ իրենց գրգռուածի, կաշառքի ու կեղեքումի գործին գլուխն անցնին դարձեալ:

Իրա՛ւ երկիրը կը զիջանի արդեօք Երտօնել այսպիսի վատութիւն մը. իրա՛ւ հանրապետութիւնը պիտի հանդուրժէ վերահաստատումը գայթակղութեան մը և տմօթի մը, որոնց պաշտօնական խօստովանութիւնն ու վայրկենական ջնջումը միևնոյն թուականին կ'իյնան:

Եթէ այս այսպէ՛ս է, աւելի լա՛ւ էր այս մաքրումին չը ձեռնարկել, քանի որ վճռական պիտի չ'ըլլար այն: Փրանսան ու իր կառավարութիւնը նուազ պատասխանատու էին լուելեայն թոյլատրելով ընդհանրապէս չը գիտցուած չարիք մը, քան թէ բացայայտօրէն վերականգնելով տիեզերահռչակ զեղծում մը:

Ու իրօք, պատճառն այն է որ այս վերջին շարժներու փոքրիկ տագնապէն ետք, անկարելի է պարզապէս ու էապէս իրերը նորէն բերել նախկին վիճակին: Չանոնք նորէն վերահաստատելու միակ իրողութիւնը՝ զանոնք կը վատթարացնէ:

Այսպէս է խայտառակ դասակր խաբեբաներու և գաղտնի գործակալներու, որոնցմով ներուած էր Միւնիւրի շրջապատուիլ: Իսկ թուրքիոյ ներքին կացութիւնն ա՛լ աւելի ծանրակշիռ է:

Հոն, խօսակցութեան թեւը նորէն բռնել այն կէտէն ուր խզուած էր, պաշտօնապէս յայտարարել Սուլթանին ու իր հպատակներուն առջև թէ՛ Փրանսան կը սրգոյի դեղագործներու հաշիւներու համար, բայց թէ իր համբերութիւնն անհուն է իրաւունքի բռնաբարումներուն համար ու մարդկու-

Թեան ընդդէմ ոճիրներուն — առաջ-
ուան փրճակին վերադառնալ չէ ասի,
նոր թուական մը բանալ է, սրուն մէջ
բարոյական շահերը պիտի անդառնա-
լիօրէն ու անդարմանելիօրէն զոհուին
նիւթական շահերուն:

Աշխարհի բոլոր իմաստակութիւն-
ները չ'պիտի կրնային այնպէս ընել որ
բան մ'անցած չ'ըլլայ այդ անջրպետին
մէջ: Փրանսան զիմեց ճնշիչ միջոցնե-
րուն, նաւատորմից մը վարձեց, զրա-
հաւորներ պարանեց, թնդանօթներ
շտկեց, գնդեր ցամաք թափեց:

Իր սուրբ կը հանէր պատեանէն:
Նշոյլովն այն շեղբին որ այնքան գեղե-
ցիկ հարուածներ տուած է ու այնքան
սիրուն կտորուած քուս'յնքան փառաւոր
պատուածներ բրած, բոլոր ազգերը
յուզուեցան: Իրարու չը հարցուցին ա-
նոնք թէ ինչո՞ւ համար էր մարտադու-
հրաւերի այս իրարանցումը: Իրարու
չ'ըսին անոնք թէ ասի՝ Լորանտոյի համար
էր ու թուպինի աղբրադրին վրայ:

Ապտ-Իւլ-Համիդ ու իր սիկար-
եանները գողացին: Բոլոր զոհերը սար-
սուացին անկարծելի սպասումով մը:
Այդը նոր օրուան մը — թերևս արիւնոտ
բայց ցեղի մ'անհուն յոյսովը շողչո-
ղուն օրուան մը — պիտի ծագէ՞ր արդ-
եօք անոնց համար:

Աւա՛ղ, ցնո՞րք մ'էր լոկ: Սուրբ
պատեանը մտաւ նորէն: Փրանսան եւ
կանչեց իր նաւերը:

Օսմ. կայսրութեան բովանդակ տա-
րածութեանը մէջ, համիտեան ռեժիմին
արարածները կ'երթան կրկնելով թէ՛
հաւատացեալներուն Առաջնորդը՝ շար-
ժում մը լոկ ըբաւ, արհամարհոտ կեր-
պով մը քանի մը զրուշ թափեց թու-
պինի ու Լորանտոյի, և թէ նաւային
մեծ ցոյցը հորիզոնին վրայ ցեղեցաւ.
այսինքն Ապտ-Իւլ-Համիդ Իսաղ պրանշ
ունի:

Անոնք որ գլուխնին վեր բարձ-
րացուցած՝ անձկատ նայուած մը սեւ-
ուած էին այն կողմը, ուր կը հաւատուէր
թէ կը ծածանէր եռագոյնը, երբեմն ի
ազգերուն բարգաւաճման ու ազատա-
գրութեան գբօջակը — անոնք՝ աչքեր-
նին վար առին յուսահատօրէն:

Իրանն որ նոյնպէս այս անգամ՝

ալ լքուեցան նորէն. կը դուշակեն,
կը նախազգան վրէժխնդրութիւնը զոր
բռնակալ մը, պոնգ մ'ընդունելուն հա-
մար կատրած, պիտի թափէ իր կամա-
յականութեան յանձնուած բարխանե-
րու ցեղի մը վրայ:

Կը համարձակիմ ըսել թէ՛ Հանրա-
պետութիւնը ոչ երբէք իրաւունք չէ՛
ունեցած լքելու իր յաճախողները —
ա՛լ աւելի իրաւունք չ'ունի չը հետա-
քըքրելու իր միջամտութեան փորձէն
դարձին հետեանքներուն, հակահար-
ուածին ու ընդհարումին: Արդէն զանի
ծաղրել էր ու անոք տղայական իմաս-
տակութիւններ ընծայել՝ պնդելով
թէ՛ օրինաւոր էր ու անվտանգ՝ կասկա-
ծելի պահանջներու համար գործելը,
և թէ՛ վտանգաւոր ու գէշ պիտի ըլլար
թափել միւլենոյն ուժն ու կորովը՝ քա-
ղաքակիրթ աշխարհին բարոյական պա-
հանջումներուն համար:

Այս չէ՛ բոլորը: Լորանտոյի ու Թու-
պինի գործերն ինչու համար, Փրան-
սան քիչ մնաց որ՝ երկարը-Քէօշքի ցըն-
դածին քաղաք պրանշ տալ թուէր, նա-
հատակ ազգերու հանդէպ զինք ան-
տարբեր կարծեցնէր, ու պատեհ ժա-
մանակի մէջ ազգու վարմունքներով,
ջարդերուն վերանորոգման առաջքն
առնելու միջոցը ձեռքէն հանէր:

Այս անգամ ալ, ա՛լ նոյնը չէ կա-
ցութիւնը: Ա՛լ անվթար չէ՛ այն: Փրան-
սան կ'ա՛մ պիտի անքակտելի խուրճի մը
մէջ կապէ իր նիւթական խնդրանքն
ու իր բարոյական պահանջումները, և
կ'ա՛մ վճռականապէս պիտի ուրանայ իր
վազեմի թեարկութիւնն ու յանձնէ զո-
հերը գահիճին. կ'ա՛մ պիտի զեկույանէ
Ապտ-Իւլ-Համիդի թէ՛ ինք, Փրանսան
Պերլինի գաշնագիրն ու մարդկան իրա-
ւունքը կը նկատէ իբրև այնքան նուր-
բական ու ճնշումի մը և գբաւակալման
մ'այնքան արժանի՝ որքան են հարեմին
հայթայթիչներուն պահանջները: Կ'ա՛մ
պիտի հասկցուի թէ՛ միջազգային հա-
մաձայնութիւնները չեն այն յանձնա-
ուութիւններու կարգէն, որոնց իրադոր-
ծումը կը հետապնդէ կառավարութիւն
մը և ոչոնց համար շարժման մէջ կը գնէ
իր զրահաւորները:

Տ. Տէլլասէի կը մնայ տեանել թէ,

Մանչի հանձարեղ իսաղիօին չը նմանե-
լու ճիգով, չը վճար գուիր Եւրոպայի ու
չազիր ու հեղնոտ աչքերուն առջև
հաւասարելու զհւանագիտութեան Սկա-
նարէլի ին մակարդակին, և թէ շատ
ահուելի պատասխանատու թիւններ
չ'ա՛ռնէր մարդ իր չլրայ, անմրցելի
պարտականութիւններէ խուսափելու
հիւանդոտ փափագով ին:

ՅՐԱՆՍԻ ՏԸ ԲՐԵՍՍՆՍԷ

Ներկայ թիւը Տ էջէ կը բաղկանայ, Տճո-
րեն—խմբագրին բացակայութեան պատճառա-
ւ Պահիրէ:—

«ԳԵՂՈՒՆԻ»

«Բազմալեզ»ի խմբագրութեան այս
նոր թերթի անդրանիկ պրակը հրատա-
րակուած է հետեւեալ պարունակու-
թեամբ.

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Երեւ. Հ. Ս. Օգնենի ու Գործենի
(խմբագրական):

Ղազկիտան. Հ. Ա. — «Այսալի հը-
րայուրիչ» ողբերգութիւնը:

Երեւ. Հ. Ս. — Գեղունի (Նկարա-
գիր սիեգերահոյակ երգապ'սաց եւ
Վենետիկոյ ներկայ գեղարուեստի ցուցա-
հանդէսին, եւ այլն):

Թրքահայ Դէմքեր (Պ. Օսեան. — Ս.
Մայրապետ Գալճայեան. — Տօֆ. Փէ-
սիմալնեան):

Էփրիկեան Հ. Ս. — Դավրէժ (սեղե-
կագրական նկարագիր):

ՊԱՏԿԵՐՆԵՐ

1. Իսպ. երաժշտական փառհե-
րու Ռոսսինիի, Պելլիքիի. Տոնիժէթթիի
եւ Վերսիի խմբակար:

2. Ապաստան մեծաւորաց (Վենե-
կոյ ցուցահանդէսին ursաւարժ պատ-
կեր):

3. Դարձ ձկնորսութենէ (գլուխ
գործոց սանիմարգացի Անիք Միքայէլ
նկարչի. զարչ Վենետիկեան ցուցահան-
դէսին):

4. Այս սարուան մէջ վախճանեալ
երկու հոգակաւոր իսպ. նկարիչ-

5. ներու գլուխ գործոցներուն գե-
ղեցիկ պատկերներ:

6. Պ. Օսեան:

7. Ս. Մայրապետ Գալճայեան:

8. Տ. Փէսիմալնեան:

9. Դավրէժի Թամարեան մանկա-
պարտէզի աւակետաց խմբակար:

10. Դավրէժի Բերդաբաղի սեւա-
րանը:

11. Դավրէժ Բաղափ ընդհանուր
սեւարան:

12. Դավրէժի Հայ Օրհորդաց Թա-
մարեան ուսումնարանը:

ԿՈՂՔԸ

Կողբ արտասապէս զարդարուած
է զբերու ծանուցումներով: Կ'ընդուն-
ուին շայտարարութիւններ. իւրաքանչիւր
սող կ'արժէ 50 սանդիմ:

Կողբ ներքին երկու երեսներուն
վրայ՝ կը պարունակէ ժամանակակից
ազգային նոր եւ կարեւոր սեղեկութիւն-
ներ, Բաղուած հայ լրագիրներէ: Բաց
ասի բազմաթիւ նոր գիտերու վրայ
սեղեկութիւններ: Ամեն ի միասին հը-
րատարակուած են մանրասառ ուրբ եր-
կայն սիւնակներու մէջ:

«ԳԵՂՈՒՆԻ» կը հրատարակուի եր-
կու ամիսը մի անգամ:

Տարեկան Բաժնեգրին է 3 Ֆրանկ:

1 րբ. 50 կոպէկ:

Թերթէս գոյացած մաքուր հասոյ-
թին կէտը առանց կրօնի խտրութեան,
կը յատկացնեն *Ազգիս Որբիկներուն*:

Ապառիկ բաժանորդագրութիւն
բացարձակապէս չընդունուիր. Գինը
կանխիկ է:

Բաժնեգրին, նամակ, եւ այլն,
Ողջակի հետեւեալ հասցէին յղելու է

«PAZMAVEB»

ST. LAZARE VENISE (ITALIE)

Ռուսաստանի եւ Ամերիկայի ազ-
գային Գեղունին դիւրաւ ստանալու
համար կարող են դիմել հետեւեալ մեր
գործակալաց

Ռուսաստան. — M. Kaloust Kaloustian
TIFLIS

Ամերիկա. — «Hayrenik» Publishing
Company (61 Essex street)

BOSTON, MASS